

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1184 a
ԲԱՆՎՈՐՈՒՅՈՒ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՅՈՒ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԳՐԱԴԱՐԱՆ № 3



Վ. ՄԵԴՎ. ԵԳԵՎ.

ԲԱՆՎՈՐՈՒՅԻ,
ՏՆՏԵՍՈՒՅԻ,
ՅԵՂԻՐ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ
ԱԿՏԻՎ ԱՆԴԱՄ

ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1928

334

Ս

Արմյ.

Վ. ՄԵԴՎԵԴԵՎ

338.1կ

ԲԱՆՎՈՐՈՒՅԻ՛,
ՏՆՏԵՍՈՒՅԻ՛,
ՅԵՂԻՐ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ
ԱԿՏԻՎ ԱՆԴԱՄ

46353

A 4256

Թարգմ. ուստերենից

ՀԱՍՏՈՒՄԻ ՆՈՒՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ ՁԵ 2
ԱԵՂՋԵՄԻԱ

ՏՊԱՐԱՆ Հ Ե Ր Մ Ե Ս
ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒՅՑԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 2047բ.
ՏԻՐԱԺ 3000

ԿՈՈՒԿԵՐԱՅԻԱՆ ԴԵՊՒ ՍՈՑԻԱԼԻԶՄ ՏԱՆՈՂ
ՃԱՆԱՊԱՐԶՆ Ե

Լրիվ կոոպերացման պայմանում մենք յերկու վոտքով կանգնած կլինեյինք սոցիալիստական հողի վրա: ԼԵՆԻՆ

Կոոպերացիան մեզ մոտ, թե՛ Խորհրդային Միության մեջ, թե՛ Հայաստանում, շատ վաղուցվանից եւ Նա ծնունդ եւ առել ինքնակալության որոք և տասնյակ տարիների պատմությունն ունի: Նա ծագել եւ բանվորների ու գյուղացիների միանալու, կազմակերպվելու ձգտումից և նպատակ եր դնում ավելի խնայողաբար քաղաքարել իրենց՝ բանվորների ու գյուղացիների առօրյա կարիքները: Սկզբում ծնունդ առան գործարանային շրջանների մանր կոոպերատիվ ընկերություններ, վորոնք իրենց առաջ դնում եյին շատ համեստ նպատակներ.— որիննակ՝ Ռուսաստանի ամենահին սպառողական ընկերություն — Կընովսկի ընկ. Ուրալյան շրջա-

նուժ իր աշխատանքն սկսել էր անդամներին
թեյ մատակարարելով:

Սակայն, աստիճանաբար այդ ընկերութիւն-
ներն աճում են, նրանց անդամներէ թիվը մե-
ծանում եր և գործունեյութիւնը համապատաս-
խան կերպով լայնանում եր:

Մինչև հեղափոխութիւնը մեր կոոպերա-
ցիան կազմակերպվում ու աշխատում եր Արև-
մտյան Յեվրոպայի կոոպերացիայի որինակով և
մեր հին կոոպերատորներն ամբողջովին ընդո-
րինակում եյին Արևմտյան Յեվրոպայի կոոպե-
րատորներէ ուսմունքը կոոպերացիայի մասին
Նշանք նույնպես քարոզում եյին, վոր կոոպե-
րացիան պետք է «ապաքաղաքական և չեզոք»
լինի. այսինքն՝ նպատակ չպետք է դնի կռիվ
մղել ինքնակալութեան տապալման համար, այլ
պետք է «խաղաղ ճանապարհով» ձգտել վերակազ-
մել կապիտալիստական հասարակակարգը: Բան-
վոր դասակարգի համար այդպիսի վեասակար գա-
ղափարներէ դեմ վաղուց է վոր կռիվ է մղում
մեր բայլըիկյան կուսակցութիւնը:

Նա ապացուցում եր, վոր բանվորի հիմնա-
կան խնդիրն իշխանութեան տիրանալու խըն-
դիրն է և կռիվը պետք է տարվի այդ ճանա-
պարհով, և ամեն մի գրույց այն մասին, թե
կոոպերացիայի միջոցով խաղաղ կերպով կարե-

ըի յե սոցիալիզմին հասնել, ցնորք ու յերևա-
կայություն ե, վոր միջնեցնում ե բանվորների
դասակարգային գիտակցությունը և հենց դրա-
նով դժվարացնում ե կապիտալիզմի դեմ մղվող
հեղափոխական կռիվը:

Յեւ, իսկապես, յեթե մենք ուշադրությամբ
նայենք՝ թե ինչ եր իրենից ներկայացնում կո-
ոպերացիան նախքան հեղափոխությունը, մենք
կտեսնենք, վոր, չնայած այն հանգամանքին վոր
կոոպերացիայում գոյություն ունեյին բազմա-
թիվ ուղղություններ, տեսակետներ և խմբակ-
ցություններ, հիմնականում կոոպերացիան կա-
պիտալիստական զարգացման ձևերից մեկն եր
և ըստ իր եյության մանր-բուրժուական մի
շարժում եր:

Հարմարվելով կապիտալիստական հասարա-
կակարգին, նա լավագույն դեպքում փորձում եր
վորոշ, շատ չնչին, ուղղումներ մտցնել կապիտա-
լիստական արտադրական ու բաշխման սխտեմի
մեջ: Նա կապիտալիզմի դեմ կռիվ չեր մղում
վորպես կապիտալիզմի, այլ, ավելի շատ խոսքե-
բով քան գործով, ձգտում եր մի քիչ մեղմաց-
նել կապիտալի առանձին տեսակների շահագործ-
ման չափը: հենց այդ պատճառով ել նա բացա-
ռում եր հեղափոխությունը և վախենում եր
նրանից: Ահա թե ինչու հին կոոպերացիան այն-

քան համառորեն փառաբանում եր ապադասա-
կարգայնության, ապաքաղաքական ու շեզոք լի-
նելու սրբազան սկզբունքները:

Կտրված լինելով հեղափոխական շարժու-
մից, նա իր շուրջն եր համախմբում միայն քա-
ղաքի ու գյուղի «բարձր», տնտեսապես ապա-
հով, շերտերը և, ըստ իր եյուլթյան լինելով ա-
ռևտրական ձեռնարկ, ձգտում եր կապիտալիզմի
պայմաններում իր անդամների համար ստեղծել
ավելի հարմար կենսական պայմաններ: Յեվ հին
կոոպերացիայի միակ խնդիրն ել հենց այդ եր:

Ճիշտ ե, հին կոոպերատորներն այդ նեղ
աշխատանքը գեղեցիկ ճառերով ու ծրագրներով
մթնացնում եյին, հավատացնելով բոլորին,
վոր այդ ճանապարհով հնարավոր ե վերակա-
ռուցել ամբողջ աշխարհը նոր հիմունքներով:
Յեվ դրա հետևանքն այն եր լինում, վոր այդ
քարոզներով մասսաների հեղափոխական ախտի-
վությունը փոխարինվում եր կոոպերատիվ գոր-
ծի առորյա մանր հոգսերով՝ և կոոպերացիան
ծառայում եր հակահեղափոխական գաղափար-
ների տարածմանը:

Ընկ. Լեճիճը հին յերազոդ-կոոպերատոր-
ների (ուստոպիստների) այդ անխրակառնանալի ցը-
նորքները շատ գեղեցիկ կերպով ե մերկացրել
իբ «կոոպերացիայի մասին» հոդվածում նա

գրում եր. «Ինչու՞ն է կայանում հին կո-
ոպերատորների պլանների (ծրագրների) ֆան-
տաստիքական (յերևակայական) լինելը: Նրա-
նում, վոր նրանք ցնորում ելին, թե գոյութուն
ունեցող հասարակարգը կարելի յե վերա-
կազմել սոցիալիսականի՝ առանց հաշվառե-
լու այնպիսի հիմնական խնդիր, վորպիսին է
դասակարգային կռիվը, պրոլետարիատի ֆաղա-
ֆական իշխանության սիրանալը, շահագործող-
ների սիրապետության սապալուսը: (Ընդգծու-
մը մերն է վ. Մ.) Հենց այդ պատճառով է,
վոր մենք այդ կոոպերատիվ «սոցիալիզմը» հա-
մարում ենք ֆանտաստիքական, ցնորական,
նույնիսկ անշնորք մի բան, թե ինչպես կարելի
յե ազդարնակության պարզ կոոպերացման մի-
ջոցով դասակարգային թշնամիներին դարձնել
դասակարգային համագործակցողներ և դասա-
կարգային պատերազմը—դասակարգային խա-
ղաղություն»: (Այսպես կոչվող «քաղաքացիա-
կան խաղաղություն»):

Այժմ արդեն, թե՛ մեր հին կոոպերացիայի
ամբողջ պատմությունը, թե՛ այժմ արտասահ-
մանում գոյություն ունեցող, կոոպերացիան
լրիվ կերպով հաստատում են մեր կուսակցու-
թյան տեսակետի ճշտությունը կոոպերացիայի
վերաբերմամբ:

Դեռ այդ քիչ ե. կյանքը մեր յերկրի հեղափոխական փորձույթը մերկացրեց, թե ինչքան կեղծ են հին կոոպերատորները և գործնականորեն ապացուցեց, վոր կոոպերացիան չի կարող քաղաքականությունից դուրս լինել և չեզոք, վոր հեղափոխական անցուդարձը կստիպեն կոոպերացիային կանգնել բարբիկադներից այս կամ այն կողմը:

Բանվոր դասակարգը լավ ե հիշում, վոր գտնվում եր մենշեիկների ու եսերների դեկավարության տակ, ակտիվ աջակցություն եր ցույց տալիս սպիտակ գվարդյականներին, վորոնք բանվոր դասակարգի դեմ կռիվ եյին մըղում իշխանության տէրանալու համար:

Այդպես եր մեր հին կոոպերացիայի անխուսափելի դերը և այդպես ե լինելու նաև արտասահմանյան կոոպերացիայի դերը, յեթե նա ինքնուրույն, առանց բանվոր դասակարգի ու նրա կուսակցության հետ կապվելու, ձգտի «խաղաղ» կերպով սոցիալիզմ իրականացնել:

Բոլորովին այլ նշանակություն ե ձեռք բերում կոոպերացիան, յերբ իշխանության գլուխ ե անցած պրուլետարիատը: Ահա թե ինչ ե ասում ընկ. Լեճիճը նույն «Կոոպերացիայի մասին» հոդվածի մեջ: «Մեզ մոտ իրապես, քանի վոր իշխանությունը գտնվում ե բանվոր դա-

սակարգի ձեռքին, քանի այդ պետական իշխանությանն են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեզ մոտ իսկապես մի խնդիր է մնացել. ազդաբնակության կոոպերացումը — և ապա շքադաբակիրթ կոոպերատորների հասարակակարգն արտադրության միջոցների հասարակական սեփականության պայմաններում, պրոլետարիատի բուրժուազիայի վրա տարած դասակարգային հաղթանակի պայմաններում — դա սոցիալիստական հասարակակարգն է»:

Այժմ Խորհրդային իշխանության պայմաններում մենք ստուգել և համոզվել ենք, վոր այդ տեսակետը ճիշտ է:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ իշխանությունն անցել է բանվոր դասակարգին, վերջինս կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ վերակազմության է յենթարկել նաև կոոպերացիան: Հասարակ առևտրական կազմակերպությունից, վոր առաջնորդում ծառայում էր դյուդի ու քաղաքի «վերին» շերտերին, այժմ կոոպերացիան դարձել է միլիոնավոր բանվորների ու դյուդացիների միացնող մի կազմակերպություն, վորը նրանց ուղղություն է տալիս սոցիալիստական շինարարության ճանապարհներով:

Մեր կոոպերացիան բոլորովին տարբերվում

ե հին կոոպերացիայից և հանդիսանում ե աշխատավորների շահերի իրական պաշտպանը կապիտալիստական հասարակակարգի մնացորդների — մասնավոր առևտրականների շահագործման դեմ: Մեր կոոպերացիան աշխատավորների հեղափոխական շարժման մի բաղկացուցիչ մասն ե և հենց այդ պատճառով մենք վճռականորեն դեն ենք շարտել հին բուրժուական կոոպերացիայի «սրբազան սկզբունքները» Հեզոքության, ապադասակարգայնության, ապաքաղաքականության մասին: Մեր կոոպերացիան ինքն իրան ինքնանպատակ չի համարում, այլ կոմունիստական կռիվի մի գործիք, վորը կառուցում ե նոր կյանքը սոցիալիստական հիմունքներով:

Յևվ մենք տեսնում ենք, վոր հեղափոխության ընթացքում և վերջին տարիներում, յերբ նրա շարքերից դուրս են շարտվել մենշևիկներն ու եսերները, ինչպես ե կոոպերացիան կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ակտիվ կերպով մասնակցում Պորհրդային իշխանության աշխատանքին՝ ժողովրդական տնտեսության ամրացման ու զարգացման գործում:

Քաղաքացիական կռիվի տարիներում, յերբ մեր յերկրի տնտեսական կյանքը համարյա մեռած դրության մեջ եր և պետք եր մի կերպ

գոյութիւնն պահպանել մինչև հաղթանակը, Պոր-
հրբղային իշխանութիւնը կոռպերացիայի վրան
պարտավորութիւնն դրեց յերկրում Ֆնացած
սպառման ապրանքները բաշխել աշխատավոր
ազգաբնակչութեան մեջ: Այդ շրջանում ամեն
վոք կոռպերատիվի անդամ եր և կցված եր այս
կամ այն բաշխման կետին: Քաղաքացիական
կռիվների վերջանալուց հետո, յերբ սկսվեց խա-
ղաղ շինարարութեան շրջանը, կոռպերացիային
նոր խնդիրներ առաջադրվեցին:

Նա կրկին վերակառուցվեց կամավոր հի-
մունքներով, քանի վոր պարտադիր անդամա-
գրութեան անհրաժեշտութիւնը վերացել եր: Յե-
թե քաղաքացիական կռիվների շրջանում այդ-
պիսի անդամագրութիւնն անհրաժեշտութիւնն
եր, քանի վոր յերկրում տնտեսական կյանքի
մասին խոսք անգամ չեր կարող լինել և կո-
ռպերացիան միայն բաշխող ապարատ եր, ա-
պա մեր տնտեսական կյանքի վերածնման ըն-
թացքում, յերբ շուկայում առևտրի ազատու-
թիւնն եր հայտարարված, այլևս կոռպերացիա-
յին պարտադիր անդամագրվելու անհրաժեշտու-
թիւնն չկար. ընդհակառակը, նման գործելակեր-
պը միայն կոռպերացիայի զարգացմանը կխան-
գարեր: Այդ պայմաններում կոռպերացիան
պետք ե իր աշխատանքը տաներ կոռպերացված

մասսաների ակտիվ մասնակցութեամբ և շատ
բնական ե, վոր նա այդ կարող եր անել միայն
կամավոր անդամադրութեան հիմունքներով:

Յեվ այժմ կոոպերացիայի հիմնական խըն-
դիրը վոչ միայն այն ե, վոր նա իր անդամնե-
րին մատակարարի լավ վորակի և եժան ապ-
քանքներ, այժմ կոոպերացիայի խնդիրները շատ
բարձր ու բարդ են:

Կոոպերացիան ամեն որ ամբանում և ու-
ժեղանում ե. նա հետզհետե ավելի յե ուշադ-
րութեան դարձնում մեր կյանքը սոցիալիստա-
կան հիմունքներով կազմակերպելու խնդիրնե-
րին: Նրա վրա այժմ մեծ և պատասխանատու
խնդիր ե դրված. ամբացնել բանվոր դասակար-
գի կապը գյուղի չքավոր ու միջակ շերտերի
հետ, կամ ինչպես ասում են, նա պարտավոր ե
իրականացնել քաղաքի և գյուղի գողումը (շա-
հերի համաձայնեցում), վորովհետև առանց դրան
բանվոր դասակարգը չի կարող սոցիալիզմ իրա-
կանացնել:

Այդ գողումը բանվոր դասակարգը գյուղա-
ցիութեան հետ միայն շեփութեան ընդունելով
չե վոր կարող ե իրականացնել: Այդ գողումը
հնարավոր ե միայն այն դեպքում, յերբ կանո-
նավոր հիմունքների վրա յին դրված արդյունա-
բերութեան և գյուղատնտեսութեան տնտեսա-
կան փոխարարբերութեանները:

Մեր մեծ գործարաններն (զավոդները և ֆաբրիկաները) ամբողջովին պատկանում են Խորհրդային իշխանությանը. պետք է այնպես անել, վոր նրանց արտադրած ապրանքները գյուղացիությանը հասնեն եժան գներով:

Գյուղացին Խորհրդային իշխանությունը գնահատում է վոչ թե խոսքերի հիման վրա, այլ գործերի: Յեվ, յեթե նա վատ ապրանքներ ստանա, գինը թանգ, նա վոչ թե սոցիալիզմի շինարարությանը կոգնի, այլ նրա տրամադրությունները կոգտագործեն բանվոր դասակարգի և Խորհրդային իշխանության թշնամիները, և այս դեպքում առաջ կդա վոչ թե գոտում, վոչ թե շահերի համաձայնեցում, այլ ընդհակառակը:

Ահա հենց գյուղին եժան և լավ վորակի ապրանքներ մատակարարելու գործն է, վոր դրված է կոոպերացիայի վրան և նա պետք է այդ կատարի՝ վերջ տալով ամեն տեսակի մասնավոր միջոցներին:

Այժմ, ՆԵՊ-ի հայտարարման շրջանից (նոր տնտեսական քաղաքականության), մեզ մոտ, թե գյուղում, թե քաղաքում, մասնավոր կապիտալը տնտեսական կյանքում մասնակցություն ունի: Յեվ պետք է նկատել, վոր նա ամենից հաջող աշխատանք է տանում գյուղում: Քաղաքում նրան շատ է ճնշում բանվորական կոոպերա-

ցիանն և նա տարեց-տարի քաղաքում կրճա-
տում ե իր գործերը և գյուղում շարունակում
այն, քանի վոր այստեղ կոոպերացիան դեռ ևս
թույլ ե և մասնավորը կարող ե մի քիչ, գոնե
մամանակավոր, ազատ շունչ քաշել և «աշխա-
տել»: Յեւ վն վոր մասնավորի ծառայությունը
թե բանվորին, թե գյուղացուն շատ թանգ ե
նստում: Հենց այդ պատճառով կոոպերացիան
Չանք չի խնայում, վոր գյուղից դուրս վունդի
մասնավորին՝ դրանով իսկ ամբացնելով գյուղի
հետ քաղաքի կապը:

Գյուղում կոոպերացիան պետք ե աշխատի
նոր ուղիների վրա դնել գյուղացու տնտեսու-
թյունը, մտցնելով այն սոցիալիստական շինա-
քարության մեջ: Այժմ գյուղական տնտեսու-
թյունները ցրված են մանր մուկը հողամասե-
րով, գյուղացին գործ ե ածում անդրջրհեղեղ-
յան, հին տեսակի գործիքներ, և հենց այդ ե
պատճառը, վոր գյուղացին իր տնտեսությունից
ատանում ե շատ չնչին յեկամուտ: Այս դրու-
թյան մեջ գյուղացուն շատ դժվար ե սոցիա-
լիզմի շինարարությանը մասնակից դարձնել:
Այս տեսակետից կոոպերացիան շատ մեծ անե-
լիքներ ունի գյուղացիության կազմակերպման
և տնտեսության կատարելագործված ձևերով
վարելու մտքով: Կոոպերացիան ե, վոր գյուղա-

ցուն պետք է տա նոր ձևի մեքենաներ և գործիքներ (սերմազտիչ, հնձող, վարող, տրակտոր և այլն): Հինց այդ միջոցովն է, վոր գյուղացու տնտեսութիւնը կբարձրանա, նա ավելի յեկամուտներ կունենա քան մինչև այժմ, կամ, ինչպես ասում են, նրա տնտեսութեան ապրանքայնութիւնը կավելանա:

Սրանք են մեր կոոպերացիայի հիմնական անելիքները գյուղում:

Բանվորական կոոպերացիայի առաջ ևս մեծ խնդիրներ են դրված քաղաքում: Այստեղ նա, բանվորների ապրանքամատակարարման գործը կազմակերպելով, կռիվ է մղում մասնավորի դեմ՝ վերջինիս շուկայից վերջնականապես դուրս մղելու համար: Այդ նպատակով կոոպերացիան բանվորին պետք է տա եժան և լավ վորակի ապրանքներ, սնունդ և լրիվ կերպով պետք է սպասարկի նրա բոլոր սպառողական կարիքները: Միայն այս պայմաններով է, վոր կոոպերացիան կարող է հաջողութեամբ կռվել մասնավորի դեմ: Ամեն մի բանվորուհի և տղատեսուհի իր սեփական փորձով գիտե, թե ինչքան թանկ է նստում նրանց մասնավոր առևտրականի ծառայութիւնները: Հենց վոր կոոպերատիվում վորևէ ապրանք պակասեց, մասնավորը վայրկենապես յեռապատիկ ու քառա-

պատիկ գներով ե այդ ապրանքը ծախում և բանվորի ունեցած վերջին կոպեկներն անմիջապես մտնում են մասնավորի գրպանը: Ահա թե ինչու բանվորական կոոպերացիայի ամբողջ ուշադրութունն ուղղված է այն բանին, վոր իր աշխատանքն այնպես կազմակերպել, վոր լրիվ կերպով ընդգրկել բանվորի բոլոր կարիքները, բավարարելով այդ կարիքները: Այս կերպ միայն կոոպերացիան կարող է պահպանել բանվորի աշխատավարձի իրական ուժը և նրա գնողունակութունը. վրչ միայն այդ, այլ և ձգտելով աշխատավարձի իրական ուժն ավելացնել ապրանքների գների իջեցման, ծախսերի կրճատման և այլ միջոցներով:

Վերջին տարիներում ամբողջ սպառողական կոոպերացիան մեծ հաջողութուններ է ունեցել մասնավորի դեմ մղվող կռվում: Այսպես որինակ, 1923—24 թվին մասնավոր առևտուրը շուկայում 58,6% տեղ էր զբաղում, իսկ 1926—27 թվին այդ տեղումն իջել է 37 ի: Նույն տարիներում կոոպերացիայի առևտուրը բարձրացել է 30,2%-ից մինչև 52,5%: Հետագա տարիներում կոոպերացիայի հաջողութուններն ել ավելի մեծ պետք է լինեն: Հատկապես մեծ նվաճումներ ունի բանվորական կոոպերացիան քաղաքներում: Այստեղ հենց բանվորների աչքի ա-

956h A 4956
ուսջ մեկը մյուսի հետևից փակվում են՝ մաս-
նավոր խանութներն ու ձեռնարկները և նրանց
տեղ բացվում են նորանոր կոոպերատիվ խա-
նութներ և ձեռնարկներ: Այդ հաջողություն-
ները հետևանք են այն բանի, վոր մեր կոոպե-
րացիան կուսակցության, կառավարության և
փայտերերի աշակցությամբ հաջողությամբ
անցկացրեց գների իջեցումը և որեցոր ավելի
և կարգի դնում իր աշխատանքը:

Այս են մեր կոոպերացիայի տնտեսական
նվաճումները: Սակայն, կոոպերացիան ունի ելի
մի շարք ուրիշ աշխատանքներ, վորոնք սոցիա-
լիստական շինարարության համար նույնչափ
կարևոր են, վորքան տնտեսական ճակատի աշ-
խատանքները:

Ամենից առաջ կոոպերացիան հասարակա-
կան կազմակերպություն է: Նա նպատակ է
դնում ներգրավել իր աշխատանքի մեջ աշխա-
տողների բոլոր մասսաները, վորովհետև ինչքան
ավելի շատ բանվոր ու բանվորուհի, գյուղացի
ու գեղջկուհի կոոպերատիվին անդամագրվեն,
այնքան կոոպերացիան ավելի հաջող կմասնակ-
ցի սոցիալիստական շինարարության գործին:
Ընկ. Լեոնիճը վաղուց է ասել՝ „լրիվ կոոպե-
րացման պայմանում մենք յերկու վոսֆոյ կանգ-
նած կլինեյինք սոցիալիստական հողի վրա“:

ՀԱՍՏՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
465000046
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
1962 ՆՄԻՔ

Ներկայումս կոռուպցիան, թե՛ գյուղում, թե՛ քաղաքում, իր շարքերի մեջ է գրավել աշխատավորների մեծ մասսաներ, սակայն նրա առաջ այս ճանապարհին շատ մեծ անելիքներ կան, մանավանդ կանանց կոռուպցիայի շարքերը գրավելու ասպարիզում, վորտեղ նրանց մասնակցութունը դեռևս շատ թույլ է:

Մեր կյանքի վերակառուցման համար մղվող կռվում կոռուպցիան շատ անելիքներ ունի, մանավանդ կենցաղային աշխատանքի բնագավառում: Մեր կենցաղի մեջ կապիտալիստական հասարակակարգից շատ սովորութուններ և նախապաշարմունքներ են մնացել: Այդ սովորութւոյուններն ու նախապաշարմունքները մեզ շատ են խանգարում սոցիալիզմի շինարարութւան գործի ընթացքում: Դրանց թվում են մեր անգրագիտութւունը, անկուլտուրական լինելը, կրօնական նախապաշարմունքները, հարբեցողութւունը և այլն: Մանավանդ պետք է հիշել անցյալից ժառանգած մեր ընտանեկան կարգերը: Կինն ըստ այդ կարգերի զուրկ է հասարակական կյանքին մասնակցելուց: Կոռուպցիան այստեղ կնոջն ոգնութւան է գալիս տարբեր կենցաղային հիմնարկների կազմակերպման միջոցով:

Իր այդ ամբողջ աշխատանքը կոռուպցիան

տանում եւ աշխատավորական մասսաների լայն
մասնակցութեամբ: Յե՛վ վորքան ակտիվ եւ այդ
մասնակցութունը, այնքան կոռպտացիան հա-
ջող կլուծի իր առաջ դրված խնդիրները, այն-
քան ակտիւ նա զարկ կտա սոցիալիստական շի-
նարարութեան մեծ գործին—դառնալով իսկա-
պես դեպի սոցիալիզմ սանող նանապարհ:

ԻՆՉ Ե ՏԱԼԻՍ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԲԱՆՎՈՐՈՒՇՈՒՆ ՈՒ ՏՆՏԵՍՈՒՇՈՒՆ

Մենք արդեն ասել ենք, վոր Խորհրդային իշխանության պայմաններում սպառողական կոոպերացիան, մասնակցելով սոցիալիստական շինարարության ընդհանուր գործում, ոժանդակում ե բանվոր դասակարգին վերակառուցել իր կյանքն ու կենցաղը նոր հիմունքներով և ազատագրվել հին որերից ժառանգած կենցաղային կարգերից: Կոոպերացիայի այդ աշխատանքով ամենից առաջ շահագրգռված ե կինը՝ միևնույն ե թե օվ ե նա — բանվորուհի թե տնտեսուհի:

Հոկտեմբերյան հեղափոխությունն ազատագրել ե կնոջն և նրան իրավահավասար դարձրել տղամարդու հետ: Սակայն, հին կենցաղի պայմանները նրան ամուր կերպով պահում են իբրենց ազդեցության տակ: Դրա պատճառն այն ե, վոր կինը հնուց յեղել ե ճորտային դրության մեջ: Նրա գործունեյությունն ընտանիքից, յեկեղեցուց, յերեսխաներից և խոհանոցից դուրս չի տարածվել: Նա կույտուրական կյանքով հետա-

քրքրվելու ժամանակ ել շուներ: Կապիտալիս-
տական հասարակակարգը շահագրգռված էր և ա-
մեն ինչ անում էր, վոր կնոջ մասին այն կար-
ծիքն ստեղծվի, թե կինն անողնական մի արա-
բած է, վոր կարիք ունի ոգնության և ուրիշին
հպատակվելու: Յեվ քանի վոր այդ այդպես է,
ապա ուրեմն կնոջ բոլոր շահերն ու նրան հե-
տաքրքրող բոլոր խնդիրները պետք է պատեն
ընտանեկան հարցերի շուրջը: Բացի այդ՝ նման
միջոցներով կապիտալիստական հասարակակար-
գը կնոջ առաջ փակում է հասարակական գործու-
նեյության բոլոր ճանապարհները: Նա վոչ մի
տեղ չէր կարող իր իրավունքների պաշտպա-
նությունը գտնել և քարշ էր տալիս իր կյանքը,
իր ծանր ու ստրկական դրությունը:

Այդպես էր առաջներում: Այդ պայմաննե-
րից շատերն այժմ այլևս չկան: Այժմ կինն ի-
րավահավասար է, սակայն դեռևս այժմ էլ պահ-
պանվում են հին սովորություններից շատերը,
վորոնք խանգարում են կնոջն ակտիվ մասնակ-
ցություն ունենալ նոր կյանքի կառուցման գոր-
ծին: Այժմ էլ, ինչպես առաջ, կնոջ կաշկոն-
դում են ընտանեկան հոգսերը, յերեխաները:
Պետք է նայել յերեխաներին, կերակուր պատ-
րաստել, լվացք անել և այլն և այլն:

Ընկեր Լենինը, բանվորուհիների համագու-

մարում ունեցած իր յերույթի մեջ, այսպես եր
գնահատական տալիս տնային տնտեսութեան
մասին. «Այդ սնային սնեստութիւնը մեծ մա-
սավք հանդիսանում է ամենամեծագոյնի, ամենավայրենի յեվ ամենաժանր աշխատանք,
վոր իրականացնում է կինը: Այդ աշխատանքը
չափազանց մանր է, իր մեջ վոյիկն չի բովան-
դակում, վոր կարող լինէր վորեվէ չափով
ճծանդակել կնոջ զարգացման գործին»: Յեվ
փաստը մնում է փաստ. կինը հենց այդ պայ-
մաններէ շնորհիվ է, վոր մինչև այժմ գուրկ է
կուլտուրական զարգացման և հասարակական
կյանքին մասնակցելու հնարավորութիւններէց:
Հենց նույն այդ պայմաններն են, վոր բանվո-
րի ընտանիքի մեջ շարունակում են պահպանել
մի շարք նախապաշարութիւններ, ինչպիսիք են՝
տղամարդու արնամարհական վերաբերմունքը
դեպի կինը, վոր իբր թէ տղամարդն է ընտանի-
քի միակ կերակրողը. կինը վոչ մի յեկամուտ
չի տալիս»:

Յեվ ահա, վորպեսզի տղամարդու և կնոջ
այդ աննախասարութեանը վերջ տրվի, Սորհրդա-
յին իշխանութիւնը մեծ ուշադրութիւն է դարձ-
նում և ոժանդակում այն բոլորին, ինչ վոր
մեր կյանքի վերականգնման և նոր հիմունք-
ներով կազմակերպվելուն դարկ է տալիս: Բայց,

դժբախտաբար, նյութական միջոցների պակասը
թույլ չի տալիս լայն թափով իրականացնել
տարբեր տեսակի կենցաղային հիմնարկները
կազմակերպումը: Իսկ առանց այդ կենցաղային
հիմնարկների անկարելի յե կնոջն ազատագրել
և հասարակական կյանքին մասնակից դարձնել:
Մինչդեռ կնոջ ազատագրման գործը՝ մեր սո-
ցիալիստական շինարարության հաջողության
տեսակետից՝ շատ կարևոր գործ է: Իլյիչը,
նույն համազուժարուժ, այս հանգամանքը պար-
զորոշ ընդգծել է: «Խորհրդային իշխանության
սկսած գործը կարող է առաջ մղվել միայն
այն ժամանակ, յերբ ամբողջ Ռուսաստանում,
մի քանի հաշուր կանանց փոխարեն, նրան
մասնակից կլինեն միլիոնավոր յեվ միլիոնա-
վոր կանայք. այն ժամանակ սոցիալիստական
եինարարության գործը, մենք համոզված ենք,
ապահովված կլինի»:

Բանվորական կոոպերացիան շատ մեծ ջան-
քեր է լաբում, վորպեսզի հասարակական աշխա-
տանքներին լծի ինչքան կարելի յե շատ թվով
կանանց: Այդ նպատակով է, վոր, բացի իր ան-
դամների սպառողական կարիքների բավարա-
րումը, մեծ ուշադրություն է դարձնում կեն-
ցաղային աշխատանքների հարցերին:

Կնոջը խոհանոցից ազատելու համար բան-

իորական կոոպերացիան կազմակերպուժ ե կո-
ոպերատիվ ճաշարաններ և փոքր: Մանուկների
համար նա կազմակերպուժ ե մսուրներ, կոն-
սուլտացիա, մանկապարտեզներ, հրապարակներ,
«Մոր և մանկան» անկյուններ: Յեւ, վերջապես,
վորպեսզի ազատ ժամանակը ոգտակար դարձն-
վի և բանվորական մասսային կուլտուրա, դի-
տուլթյուն և նոր սովորություններ տրվի, բանվո-
րական կոոպերացիան կազմակերպուժ ե թեյա-
րաններ, կինոներ, ռադիո, տանուժ ե լայն
կուլտ-կրթական աշխատանք կոոպերատիվ դա-
սընթացքների, դպրոցների, խմբակների, զբույճ-
ների ու դասախոսությունների միջոցով:

Այդ բոլոր ձեռնարկումներն անպայման
զարկ կտան կնոջ ազատագրման գործին. նա
աստիճանաբար մասնակից կդառնա հասարակա-
կան կյանքին, թոթափելով իրենից բթացնող
հոգսերն ու տնային մանր աշխատանքները:
Ճիշտ ե, կոոպերացիայի այդոբինակ հիմնարկնե-
րի թիվն անբավարար ե: Հենց, որինակ, յեթե
կոոպերացիան իր հացի վաճառքով շուկայուժ
մեծ տեղ ե գրավել, ապա հասարակական սննդի
(ճաշարանների) գործի մեջ նրա հաջողություն-
ները, թեև տարեց-տարի զգալի արդյունք են
տալիս, սակայն հասունացած կարիքները չեն
կարողանուժ լրիվ չափով բավարարել: Ներկա-

ու մտ բանվորական կոոպերացիան 775 ճաշա-
բան ունի և որական բաց ե թողնում 500 հա-
զար ճաշ կոոպերացիայի 4-ամյա պլանով նա-
խատեսվում է ճաշարանների ու խոհանոց-գործա-
րանների թիվը ավելացնել այնքան, վոր որե-
կան հնարավոր լինի բաց թողնել 730 հազար
ճաշ ավելի քան այժմ: Պարզ ե, վոր այդ նվա-
ճումը շատ զգալի կլինի նոր կենցաղի կառույց-
ման բնագավառում:

Բանվորական կոոպերացիան տարեց-տարի
նույնպես շատացնում ե իր կենցաղային ման-
կական հիմնարկները, վորոնց մեջ նա վոչ մի-
այն յերիտասարդ առողջ սերունդ ե պատրաս-
տում, այլև կնոջն ազատում ե մանուկների
համար հոգ տանելու աշխատանքներից: Բանվո-
րուհին կարող ե իր մանուկներին հանձնել մլ-
սուրբի խնամքին, մանկական հրապարակին, մա-
կապարտեզին և հանգիստ գնալ աշխատանքի:
Տնտեսուհին ել կարող ե նույնն անել և այլ գոր-
ծերով զբաղվել: Մանուկներն այդ պայմաննե-
րում վոչ միայն խնամվում և սնվում են, այլ և
նրանցից ավելի շտիպասանները, փոխանակ փո-
ղոցային սովորություններ ձեռք բերելու, սո-
վորում են հասարակական կյանքի ու աշխա-
տանքի:

Ահա թե կոոպերացիան ինչ ե անում կնոջ

ազատագրման համար: Դրա հետ միասին, տանելով տարբեր տեսակի կուլտ լուսավորական աշխատանքներ, բանվորական կոոպերացիան զարկ է տալիս իր անդամների գրագիտությանը և մտավոր մակարդակի բարձրացման գործին: Բանվորական կոոպերացիան ձգտում է բանվորներին ազատել գինեանների ու զարեջրատների նեխված մթնոլորտից և նրանց ազատ ժամանցի համար տալ ոգտակար ու դուրեկան զբաղմունքի պայմաններ:

Անցյալի անիծյալ մնացորդ — հարբեցողությունը բանվորների մեջ շատ է տարածված: Մենք գիտենք, թե ինչպես հարբեցողության հետևանքով կատարվում են շատ հանցագործություններ, տանջվում են կանայք, հիվանդանում են յերեխաները: Թվում է, թե շատ հեշտ է վերցնել և միանգամից փակել բոլոր գինեանները, արգելել խմիչքների վաճառքը: Այսպես են հաճախ միամտորեն մտածում կանայք: Փորձը ցույց է տվել, վոր այդ այնքան էլ հեշտ չէ, և այդ կերպ խնդիրը լուծել չի կարելի: Կոիվը պետք է այլ կերպ մղել: Պետք է կազմակերպել տարբեր կուլտուրական հիմնարկություններ, պետք է տանել կոոպերատիվ դաստիարակչական աշխատանք, պետք է այնպես անել, վոր բանվորն իր ազատ ժամերն սնցկացնելու հար-

մարութիւններ ունենա կուլտուրական հան-
դատի ու ընկերական-հասարակական մթնոլորտի
պայմաններում: Այս կերպ կարելի չե կռվել
հարբեցողութեան դեմ: Այս ել բանվորական
կոոպերացիայի անելիքների մեջ ե մտնում է
նա արդեն ձեռնարկել ե այդ աշխատանքներին:
Յեւ, վերջապես, պետք ե հիշատակել կոոպերա-
ցիայի այն հսկայական դերը, վոր նա կատա-
րում ե բանվորների աշխատավարձի իրական
ուժը (մակարդակը) պահելու համար. բան-
վորունհին ու տնտեսունհին, վորոնք տանում են
իրենց տնտեսութիւնը, շատ լավ գիտեն թե ինչ
հսկայական տարբերութիւն կա մասնավոր
առևտրականի ե կոոպերատիվի գների մեջ: Կոո-
պերացիան ե, վոր սանձահարում ե մասնավորի
ախորժակը: Ահա թե ինչու բանվոր դասակար-
գը, այս թվում նաև կանայք, պետք ե շահա-
գրգռված լինեն կոոպերացիայի զարգացման ու
ամբացման գործի համար:

Ամփոփելով մեր ասածներն այն մասին, թե
ինչ ե տալիս կոոպերացիան կնոջը, մենք կարող
ենք համառոտակի ասել, Կոոպերացիան բանվորի
աշխատավարձը պաշտպանում ե մասնավորի
ազահ ախորժակից, ոգնում ե, վոր բանվորն իր
բյուջեն մսխի խնայողութեամբ ե բարելավի իր
կենցաղի պայմանները, աջակցում ե կուլտու-

քական սովորութիւների զարգացմանը և վըճ
ռական կռիվ ե մղում հին կենցաղի մնացորդ-
ները դեմ: Կոոպերացիան ոգնում ե մայրերին
մանուկ սերնդին առողջ զարգացնելու և մեծաց-
նելու գործում, և, վերջապես, ապատագրում ե
կնոջն ընտանեկան մանր մունք հոգսերից, խո-
հանոցի բթացնող մթնոլորդից, դարձնելով նը-
րան իրապես ազատ և իրավահավասար, և հնա-
րավորություն ստեղծելով նրա համար՝ մասնակ-
ցելու նոր կյանքի ու սոցիալիստական շինա-
րարության մեծ գործին:

ԲԱՆՎՈՐՈՒՇԻ ՅԵՎ ՏՆՏԵՍՈՒՇԻ ԱԿՏԻՎ ՅԵՂԻՐ

Կասկած չկա, վոր բանվորուհիները, գեղջկուհիների ու բանվորների կանանց մեջ կան, շատ անգամ ավելի թվով քան մեզ ե հայտնի, կազմակերպչական տաղանդներ. մարդիկ, վորոնք կարող են գործնական աշխատանք գլուխ բերել: ԼԵՆԻՆ

Կոոպերացիան, վորպես հասարակական կազմակերպություն, ուժեղ ե իր անդամների ինքնագործունեությունամբ: Վորքան ավելի շատ թվով բանվորներ, բանվորուհիներ, տնտեսուհիներ կոոպերատիվին անդամագրվեն, վորքան ավելի ակտիվ են նրանք կոոպերացիայի աշխատանքներին մասնակցում, ամբացնում նրան իրենց միջոցներով, վարչությունն ոժանդակում լավացնել կոոպերատիվի աշխատանքը և վերացնել բացերն ու պակասություններն, այնքան ավելի հաջող ու արագ մեր կոոպերացիան կաշխատի ու կզարգանա:

Մենք արդեն նկատել ենք, վոր կոոպերա-

ցիայի աշխատանքի բացերից մեկն այն է, վոր բանվորուհիներն ու տնտեսուհիները թույլ մասնակցութիւն ունեն կոոպերացիայի գործունեութեան մեջ: Իսկ դրանից հետևում է այն, վոր նրանց թիվը շատ քիչ է լիազորների կազմի մեջ: Նրանք չեն ընտրվում կոոպերատիվի ղեկավար մարմինների՝ վարչութեան և վերստուգիչ հանձնաժողովի մեջ և հենց այդ պատճառով ել անկարող են ինչպես հարկավոր է ազդեցութիւն ունենալ բանկոոպի աշխատանքի ընթացքի վրա: Մեզ բոլորիս լավ է հայտնի, վոր յուրաքանչյուր կոոպերատիվ բազմաթիվ պակասութիւններ ունի: Յե՛վ ահա, փոխանակ անդամագրվելու կոոպերատիվին և ակտիվ կերպով մասնակցելու այդ պակասութիւնների վերացման գործին, բանվորուհիներն ու տնտեսուհիները գերադասում են մի կողմ կանգնել և իրենց դժգոհութիւններն արտահայտել բամբասանքների ու ասեկոսների միջոցով: Կոոպերացիային այդպես վերաբերվելը հետևանք է հետամնացութեան, անկուլտուրական լինելուն և առաջ է գալիս նրանից, վոր կանայք բավարար չափով չեն գիտակցում իրենց շահերը: Բանվորուհիներն ու տնտեսուհիները մոռանում են, վոր կոոպերացիան հենց իրենց սեփական գործն է, վոր կոոպերացիան բարելավում է նրանց դրու-

թյունը, նրանց բերում ե ազատագրում և կալստուրական կյանք:

Ճիշտ է, վոր արդեն բազմաթիվ բանվորուհիներ և տնտեսուհիներ կոոպերացիային անդամ են և ակտիվ մասնակցություն ունեն նրա աշխատանքներին: Շատ կանայք կան բանվորական կոոպերացիայի վարչության և վերասուղիչ հանձնաժողովում, և ավելի շատ թվով— խանութային հանձնաժողովներում: Այդ մարմինների մեջ (և հատկապես խանութային հանձնաժողովներում) աշխատելով, կանայք բերել ու բերում են կոոպերացիային մեծ ոգուտ: Բավական ե հիշատակել, որինակ, կանանց ակտիվ աշխատանքը դների իջեցման կամպանիայում. դների հետ կառարվող չարաշահությունների ու զեղծումների մեծ մասը կանայք են մերկացրել: Յեվ կամ միթե մենք ամեն որ չենք կարգում լրագրների հարյուրավոր լուրերն ու թղթակցությունները՝ թե ինչպես են կանայք ակտիվ աշխատանք տանում խանութային հանձնաժողովներին մեջ, վերացնելով կոոպերատիվների բազմաթիվ բացերն ու պակասությունները: Այնտեղ, վորտեղ խանութային հանձնաժողովները կանոնալոր հերթապահություն են տանում խանութներում, ավելի քիչ են գործակատարների կոպտության, քաշի ու չափի մեջ

խարդախութիւններ անելու, զների բարկացման և այլն նման դեպքերը: Մինչև իսկ այդպիսի խանութներում վաճառվող ապրանքների վորակն ել ե լավացել. վորովհետև խանութային հանձնաժողովը վատ վորակի ապրանքը չի թույլատրում խանութում վաճառքի հանել: Ահա թե խանութային հանձնաժողովն ինչքան ոգտակար աշխատանք կարող ե կատարել կոոպերատիվի և սպառող մասսաների համար: Իսկ այդ աշխատանքը մեծ մասով և մեծ հաջողութեամբ կանայք են կատարում, քանի վոր նրանք ավելի հաճախ են լինում խանութում և ավելի լավ են նկատում կոոպերատիվի բացերն ու անկարգ կողմերը:

Այն բանվորական կոոպերատիվներում, վորտեղ լիազորների կազմի մեջ կանանց թիվը մեծ ե, վերջիններս մեծ ազդեցութիւն են ունենում բանկոոպի վարչութեան ընդհանուր գործնեյութեան վրա: Անցյալ տարի, բանվորական կոոպերատիվների ոգուտների բաշխման ժամանակ, այնտեղ, վորտեղ կանայք շատ թվով եյին մասնակցում, հենց կանանց պահանջով եր, վոր կոոպերացիան կենցաղային մի շարք ձեռնարկների (մսուր, մանկապարտեզ, մանկական հրապարակ և այլն) համար դրամական մեծ գումարներ հատկացրեց իր ոգուտներից. հետո-

գայում ևս հենց նույն կանայքն էյին, վոր ակտիվ կերպով մասնակցում ու ղեկավարում էյին այդ ձեռնարկների կազմակերպումը, հսկում էյին ու ղեկավարում նրանց աշխատանքները:

Թե ինչքան մեծ է այդ կենցաղային հիմնարկների կարիքը մեզանում ցույց է տալիս այն փաստը, վոր մի քանի բանվորական կոոպերատիվներում բանվորուհիներն ու տնտեսուհիներն իրենց նախաձեռնությամբ, ինքնուրույն կերպով դրամական գանձումներ են կատարել և, հավաքած դրամները բերելով բանկոպի վարչությանը, պահանջել են այդ գումարները միացնել կոոպերատիվի կենցաղային ֆոնդերին և բանալ ժառանգը ու մանկական հրապարակներ:

Այսպիսի հետևանքներ, ե տվել կանանց ակտիվ մասնակցությունը կոոպերացիայի աշխատանքների մեջ: Ահա թե ինչու պետք է բոլոր բանվորուհիներն ու տնտեսուհիները կոոպերատիվին անդամագրվեն: Կոոպերացիան այս գործում նրանց ընդառաջ է գնում և գործն ավելի յե հեշտացնում: Կանանց անդամագրության համար կոոպերացիան մի շարք արտոնություններ ունի: Փայավճարը կարելի յե մուծել մասմաս, յերկար ժամանակի ընթացքում: Այս մտքով կանանց համար վոչ մի դժվարություն

չկա: Յեթե կա մի դժվարութիւն՝ դա հնուց
մնացած աշն սովորութիւնն է, թե «մարդս չի
թուլլատրում», «մարդս գրքույկ ունի» և այլն:
Այդ նախապաշարումներից պետք է հրաժարվել
ինչքան կարելի յե շուտ. վորովհետև, շնորհիվ
այդ նախապաշարումների՝ կանայք դեռ ևս յեր-
կար ժամանակ կարող են կտրված մնալ հասար-
ակական աշխատանքներից և օրնտանեկան
ճորտութիւնն մեջ ապրել: Յեվ կնոջ այդ ճոր-
տութիւնի, ազատվելու առաջին և գլխավոր
ճանապարհը կոոպերացիան է: Բոլոր բանվորու-
հիներն ու տնտեսուհիները պետք է, առանց հե-
տսձգելու, կոոպերատիվին անդամագրվեն և նրա
դործունեյութիւնն ակտիվ մասնակիցներ դառ-
նան: Մանավանդ այդ անհրաժեշտ է այժմս ա-
նել: Վերջացել է հաշվական տարին: Կոոպերա-
տիվների վարչութիւնները պատրաստվում են
հաշվետւութիւն. նրանք կոոպերատիվի անդամ-
ներին պատմելու յեն իրենց մի տարվա գործու-
նեյութիւն, նվաճումների, հաջողութիւնների,
բացերի և դժվարութիւնների մասին:

Տարեվերջին ամեն մի փայտեր պետք է
խիստ կերպով ստուգի կոոպերատիվի կատա-
րած աշխատանքը և տեսնի՝ թե վարչութիւնը
վորքան հաջողութիւնք և լրիվ է իրականացրել
նրան տրված հրահանգները: Վարչութիւն և

վերստուգելի հանձնաժողովի աշխատանքները տարեվերջին ստուգելիս չպետք է մոռացու թյան տալ խանութային հանձնաժողովների ու լիազորների գործունեյությունն ևս ստուգել, Պետք է պարզել, թե արդյոք նրանք անուշաղիւր չէն թողել իրենց աշխատանքները, պաշտպանել են փայտերերի շահերը, ինչ ոգնություն են ցույց տվել վարչությանը կոոպերատիվի բացերի վերացման գործում, և յեթե նրանք լավ են աշխատել — այս դեպքում նրանց վերընտրել:

Ընդհանուր առմամբ պետք է ասել, վոր հաշվետու-վերընտրական կամպանիան ընդհանուր ստուգատես է թե կոոպերատիվի և թե այն բոլոր անձանց գործունեյության, վորոնց փայտերերը վստահել են կոոպերատիվի գործերը՝ նրանց ընտրելով այս կամ այն մարմնի անդամ: Այդ կամպանիան վոչ միայն հաշվական տարվա ամփոփումն ու գնահատականն է տալիս, այլ և հետագա աշխատանքի պլանն են ախորոշում, քանի վոր մի տարով կոոպերատիվի բաղդը հանձնարարվում է ընտրվելիք նոր մարմիններին:

Հատուկ ուշք պետք է դարձնել կանանց այդ մարմինների մեջ մասնակից դարձնելուն: Վերջին յերեք տարիներում այդ մասնակցությունը հետևյալ պատկերն է ունեցել.

Քաղաքային և բանվորական կոոպերատիվների

	Վարչաթյուններում	Վերստուգիչ հանձնա-
1925 թվին	11,5 ⁰ / ₀	6,3 ⁰ / ₀
1926 »	10,4 ⁰ / ₀	7,9 ⁰ / ₀
1927 »	18,5 ⁰ / ₀	13,8 ⁰ / ₀

Այդ աղյուսակը ցույց է տալիս, վոր վերջին տարում կանանց մասնակցությունը կոոպերատիվ ղեկավար մարմինների մեջ ուժեղացել է: Սակայն մասնակցության այդ տոկոսը բավարար համարել չի կարելի, քանի վոր նրանց տոկոսային մասնակցությունը վարչական ու ստուգողական մարմիններում բոլորովին ել չի համապատասխանում կանանց թվին լիազորական ժողովի կազմում և փայտերերի ընդհանուր քանակի մեջ:

Հենց այդ պատճառով անհրաժեշտ է բոլոր բանվորուհիների ու տնտեսուհիների ակտիվ մասնակցությունն այս տարվա հաշվետու վերջնորական կամպանիային:

Այս տարվա կամպանիան մեծ չափով տարբերվելու յե անցյալ տարիները կամպանիայից: Անցյալ տարիների կամպանիաների ժամանակ բանվորական կոոպերացիայի առաջ դրվող հիմնական խնդիրն եր նոր սկսվող տարում ավելի ևս մեծացնել առևտրական շրջանառությունը և

ավելի ևս ընդգրկել մանրածախսի շուկան: Յեվ
բանվորական կոոպերացիան վերջին տարիներում
այդ խնդիրը լուծել է բավարար չափով:
1926—27 թվին բանվորական կոոպերացիայի
ընդհանուր գումարը հասել է
3,820 միլիոն ռուբլու, վոր բանվոր դասակարգի
աշխատավարձի շուկայում մսխվելիք գումարի
63⁰/₀-ն է կազմում: 1928—29 տարում այդ
ընդհանուր գումարը 4.300 միլիոն ռուբլու պիտի
հասնի, ուրիշ խոսքով ասած՝ բանվորական
աշխատավարձի 68⁰/₀ պիտի անցնի կոոպերա-
տիվ ընդհանուր գումարի միջոցով: Բանվորական
կոոպերացիայի այդ ընդհանուր գումարը, նրա խա-
նութենքի ու ձեռնարկների ներկա թվով, նրա
ֆինանսական միջոցների ներկա գրությամբ,
պետք է ամենաբարձր գումարը համարել. այլա-
պես, յեթե բանվորական կոոպերացիան ավելի
մեծ ընդհանուր գումարներ կատարի, այդ ի հա-
շիվ նրա աշխատանքի վորակի վատացման կլի-
նի (ներթեր, առևտրի տեխնիքական պակասու-
թյուններ և այլն), իսկ այդ բոլորովին էլ ցան-
կալի չէ:

Մինչդեռ բանվոր դասակարգի նյութական
գրության բարելավման հետ զուգահեռ, կոոպե-
րացիային առաջադրվում է սպառողներին կուլ-
տուրական կերպով և ավելի շնորքով սպասար-

կելու պահանջը: Իսկ այդ հնարավոր ե, յեթե կոոպերացիան կարողանա կառուցել նոր խանութներ, պահեստներ, մթերքներ պահելու սառցարաններ, հացի գործարաններ և այլն: Կոոպերացիայի հիմնական շինարարության հետ ե կապված այն, վոր կոոպերացիան կարողանա լիովին ընդգրկել սպառողների բովանդակ կարիքների բավարարումը: Բացի այդ, կոոպերացիան, ընդառաջելով բանվորների կուլտուրական պահանջներին, պետք ե ձեռնարկի կահ-կարասիների, ռադիո և լուսանկարչական պարագաներով առևտրի գործին: Այս աշխատանքը կոոպերացիայի համար նոր ե. դրա համար նոր միջոցներ են պահանջվելու: Յեվ այս գործում կինը պետք ե կոոպերացիային ոգնի:

Դրա հետ միասին բանվորական կոոպերատիվները պետք ե կատարեն մի շարք վերասարքավորումներ, մեքենայացման յենթարկելով առևտրի մեջ մի շարք աշխատանքներ և հեշտացնելով ապրանքների թե՛ արտադրումը, թե՛ բաց թողնելը:

Այդ բոլոր ձեռնարկումները պահանջում են շատ խոշոր ծախքեր և բանկոպները պետք ե այդ միջոցները հայթհայթեն: Անկասկած ե, վոր Խորհրդային իշխանությունը կոոպերացիային ցույց ե տալու աջակցություն, սակայն վերջի-

նիս չաիը չի կարող շատ մեծ լինել: Կառավարութեանը մեծ գրաւական միջոցներ են հարկավոր նոր դարձարմաների կառուցման, նոր մեքենաների ու սարքավորման, գյուղի ելեքտրոֆիկացիայի և մեր տնտեսութեան բարձրացման այլ նպատակների համար: Ահա թե ինչու կառավարութեանը չի կարող կոոպերացիային մեծ դրամական միջոցներ տրամադրել: Կոոպերացիան իրեն անհրաժեշտ միջոցները պետք է ինքը գտնի իր անդամների մեջ: Առաջիկա հաշվետու և վերընտրական ժողովներում քննվելու յին՝ թե ինչպիսի կառուցումներ կատարել առաջին հերթին և ինչ միջոցներով, վորտեղից գրտնել անհրաժեշտ միջոցները:

Այս և նման հարցերի ճիշտ վորոշման մեջ ամենից առաջ շահադրդոված են կանայք՝ բանվորուհին ու տնտեսուհին: Չե՞ վոր նրանք են, վոր ամենից շատ ժամանակ են կորցնում հերթի կսեղներով, մասնավորից ապրանք գնելիս ստիպված են ավելի վճարել և ընդհանուր առմամբ ավելի հուղվել ու դժգոհ լինել կոոպերատիվում տէրող անլարգութեաններից ու բացերից:

Վերընտրական ժողովներում այս հարցերի քննութեանը կանայք պետք է ամենաակտիվ մասնակցութեան ունենան, լավ հիշելով, վոր դրանց ճիշտ լուծումից և կախված կնոջ ազա-

տագրման և նոր կենցաղի կառուցման հետագա նվաճումները:

Նույն ժողովներում բանվորուհիներն ու տնտեսուհիները պետք է ակտիվ կերպով մերկացնեն բանկոտպի աշխատանքի բոլոր բացերը կամ նրա առանձին ձեռնարկություններում նկատված թերությունները հատկապես սպառողների ապրանքամատակարարման գործում: Չե՛վոր ապրանքների պակասն ու հերթերը կոոպերատիվում շատ հաճախ հետևանք են վոչ թե ապրանքի բացարձակ չլինելուն կամ պակասին, այլ կոոպերատիվի աշխատանքի անկանոն կազմակերպմանն՝ որինակ, ապրանքի ժամանակին պահեստից չստանալուն, պահանջված չափից քիչ քանակ ունենալուն և այլն:

Վարչությունն իր անդամների սակավաթիվ լինելու պատճառով միշտ հնարավորություն չունի այդ բացի ու անկարգությունների մասին տեղյակ լինելու և նրանց վերացնելու. մանավանդ, յեթե ի նկատի առնենք, Վոր շատ հաճախ կոոպերատիվի բաժանմունքները փոխված են տասնյակ վերստ տարածության վրա: Վարչությանն այս գործում լավագույն ոգնություն կարող են ցույց տալ կանայք: Նրանք են, Վոր ամեն որ տեսնում են այդ բացերն ու անկարգությունները, այդ անկազմակերպ լինելուց ա-

նաջացող պակասութիւնները և նրանք են վոր
բացարձակ կերպով լայն մասսայի առաջ պետք
է քննադատեն կոոպերացիայի բացերը և վոչ
թե այս ու այն անկյունում ասեկոսենքով ու
բամբասանքներով զբաղվեն: Կանանց այդորի-
նակ ակտիվութիւնը ժողովներում, անկասկած,
մեծ ոգուտ կտա բանկոտպի աշխատանքի լա-
վացմանը: Նույն այդ ժողովներումն է վոր պետք
է անսպախման աշխատել ավելի մեծ քանակու-
թիամբ կանանց առաջ քաշել լիազորները ու
խանութային հանձնաժողովների մեջ, ի հարկէ,
այնպիսի կանանց, վորոնք իբրև հասարակական
գործիչներ յեռանդ ու ակտիվութիւն են ցույց
տվել և կարող կլինեն համառորեն ձեռք առնել
այն բոլոր միջոցները, վորոնք անհրաժեշտ են
կոոպերացիայի բացերի վերացման և նոր կեն-
ցազի հիմքերն ամրացնելու համար:

Ընտրված լիազորներին պետք է հրահանգ (նա-
կազ) տալ նրանց անելիքների մասին: Հրահանգ-
ների մեջ հաշվառելով բանկոտպի ֆինանսական
գրութիւնը պետք է ցույց տալ, թե ինչպիսի
կենցաղային հիմնարկներ պիտի բանա բանկո-
տպը նոր հաշվական տարում: Այդ հրահանգում
պետք է խուսափել անվորոշ ու լայն խոստում-
ներից ու ծրագիրներից և ամեն ինչ գրել կոնկ-
րետ ու պարզ. որինակ՝ 1) բաց անել բամբակա-

դործարանի շրջանում մանկապարտեզ 100 հոգու համար, 2) բաց անել ճաշարան և թեյարան մանվածագործարանի 500 բանվորների համար, 3) բանվորական ակումբում դնել ուժեղ ռադիո ընդունիչ և այլն: Չպետք է գրել այսպես. «ուժեղացնել կենցաղային հիմնարկները», «պարկ տալ ճաշարանային գործին», «առաջնահերթ նշանակութուն տալ ռադիո-գործին» և այլն: Նման վորոշումները վոչինչ չեն ասում և վարչության վրա վորոշ պարտականութուն չեն դնում: Այս տարի հատուկ ուշադրութուն պիտի դարձնել ոգուտների բաշխման խնդրին: Այս տարի վոչ մի բանկոոպ գնումների պարգևատրում (պրեմիա) չի կատարելու: Պետք է այս տարվա ոգուտներից մեծ գումարներ հատկացնել կենցաղային ու կոլլեկտիվ նպատակների: Այս մասին հավանական է, վոր տեղերը կը ստանան կոոպերատիվ կենտրոններից վորոշ ցուցումներ, վորով և կառաջնորդվեն: Ընտրված լիազորներին պետք է հանձնարարել, վոր նրանք վարչության և վերստուգիչ հանձնաժողովի նոր ընտրվելիք կազմի մեջ անպայման մտցնեն ավելի մեծ թվով կանայք քան մինչև այժմ: Այսպիսի խնդիրներ են, վոր պետք է ժողովներում լուրջ քննության դրվեն և լուծվեն: Յեվ այդ բոլոր խնդիրների ճիշտ լուծման մեջ ամենից

շատ շահագրգռված են կանայք. հենց այդ պատ-
ճառով է, վոր նրանք պետք է ակտիվ ու յե-
ռանդուն կերպով մասնակցեն հաշվետու ու
վերընտրական ժողովներին:

Նույնը կարելի յէ ասել խանութային հանձ-
նաժողովների մասին: Այս դեպքերում պետք է
ընտրել ակտիվ կանանց. վոչ թէ այնպիսիներին,
վորոնք խանութում միայն դիտողների դեր են
կատարելու կամ բոլովին չեն լինելու, այլ այն-
պիսիներին, վորոնք ժամանակ ու ցանկություն
են ունենալու շարունակաբար նշանակված հեր-
թապահությունը կատարել և ոգնել վարչու-
թյանը խանութի բազմաթիվ թերությունները
վերացնել կամ կւճատել, վորոնք ընդունակ կը
լինեն գործակատարների ու գնորդների փոխ-
հարաբերությունները հարթել և տեղի ունեցող
թյուրիմացությունները պարզել ու վերջ տալ:

Միայն այս մտտեցումով է, վոր կարելի յէ
ապահովել լիազորների ժողովի ու խանութային
հանձնաժողովների կազմը գործունյա և ակտիվ
անդամներով, վորոնք կլավացնեն կոոպերատի-
վի աշխատանքը:

Այս տարվա հաշվետու վերընտրական կամ-
պանիային մենք հետեյալ կոչն ենք ուղղում
կանանց. յեղե՛ք ակտիվ, ամենագործոն ու մո-
սիկ մասնակցություն ունեցե՛ք ժողովներին:

Համարձակ քննութեան յենթարկեցեք կո-
ոպերատիվի բոլոր բացերը: Ցույց տվեք թե
ինչպես պետք է վերացնել այդ բացերը: Կո-
ոպերատիվի ընտրովի մարմինների մեջ առաջ
քաշեցեք և ընտրեցեք ընդունակ ու ակտիվ կա-
նանց, ոգնեցեք նրանց հաջողութեամբ տանել
այն աշխատանքը, վոր նրանց եք հանձնարա-
րելու: Յեվ այն ժամանակ ե, վոր բանվորական
կոոպերացիան կարող էլինի ձեռք առնել բոլոր
անհրաժեշտ միջոցները կնոջ ազատագրման ու
նոր կենցաղի համար, արագացնելով ու զարկ
տալով մեր սոցիալիստական շինարարութեան
գործին:

Ի հարկե կանանց ակտիվ մասնակցու-
թյունն անհրաժեշտ է կոոպերացիային վոչ մի-
այն հաշվետու-վերընտրական կամպանիայի ըն-
թացքում: Մենք հատկապես այս խնդրի վրա
կանգ առանք այն պատճառով, վոր կամպանիա-
յի ընթացքումն է, վոր վերընտրվելու յեն կո-
ոպերացիայի բոլոր դեկավար մարմինները և
այդ է, վոր հենց այժմից վճռական նշանակու-
թյուն ունի առաջիկա գործունեութեան ու անե-
լիքների հաջողութեան տեսակետից: Հենց այդ
պատճառով է, վոր այս կամպանիայի ընթաց-
քում բարձր ու վորոջ պետք է այս լողունգը
հայտարարել. «հանապարհ կնոջը դեպի բանվո-

րական կոռպերացիայի դեկավար դիրքերը»:
Բայց այս չի նշանակում, վոր մնացած բանվոր-
ուհիները ու կանանց դերը հենց դրանով ել
վերջանում ե: Գործին այսպես վերաբերմունք
ցույց տալը մեծ վնաս կտա կոռպերացիային:
Պետք ե հիշել, վոր, ինչքան ել մենք շնորքով
մարդիք չուղարկենք կոռպերատիվ աշխատանքի,
նրանք առանց փայտերերի ոգնության չեն
կարող բավարար կերպով տանել կոռպերատիվի
հսկայական աշխատանքը: Կանայք պետք ե շա-
րունակ հետաքրքրվեն իրենց լիագործների, խա-
նութային հանձնաժողովների, վարչության ու
վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքներով:
Յերբեմն, յերբեմն պետք ե լսել նրանց գործունե-
յության մասին զեկուցումներ, թե ինչ ձեռ-
նարկումներ են մշակված հրահանգի բոլոր կե-
տերի կիրառման համար. նրանք կարիք ունեն
լսել իրենց ընտրողների խորհուրդներն ու ցու-
ցումները՝ առօրյա աշխատանքներում նրանցով
դեկավարվելու համար:

Ինչ վերաբերում ե այն ընտրվածներին,
վորոնք աշխատելու շնորհք չունեն կամ ցան-
կություն, այդպիսիներին պետք ե հետ կանչել
ու փոխարինել նորերով: Միայն այս կերպ կա-
նայք կարող կլինեն կապ պահպանել իրենց
ընտրյալների հետ կոռպերատիվ մարմինների

մեջ, ապահովելով նրանց գործունեյությունը դրական հետևանքներով և կենցաղային գործնական խնդիրների հաջող լուծմամբ:


Միաժամանակ մոռացութեան չպետք է տրվի նաև կանանց պատրաստման խնդիրը կոոպերացիայում աշխատելու համար: Պետք է հարց դնել՝ կանանց առաջ քաշելու վոչ միայն կոոպերատիվ ընտրովի մարմինների մեջ (այստեղ մեծ թվով կանանց հնարավոր չե ընտրել, քանի վոր կոոպերատիվների ընտրովի մարմինները շատ ել բազմամարդ չեն), այլև կոոպերատիվի ապարատում և հատկապես նրա կենցաղային ձեռնարկների մեջ (ճաշարաններ, մանկապարտեզներ մսուրներ և այլն): Կինը, վոր այս հիմնարկների հաջող գործունեյութեամբ ամենից շատ ե շահագրգռված, կարող կլինի նըրանց աշխատանքը լավ կազմակերպել ու առաջ տանել:

Իսկ, վորպեսզի առաջ քաշման նետուանքները լավ լինեն, կանայք պետք ե մեծ մասնակցութեան ունենան կոոպերացիայի աշխատողների պատրաստման ու վերապատրաստման դասընթացներում, դպրոցներում ու խմբակներում: Սովորելով այդ դասընթացներում և ակտիվ կերպով մասնակցելով խանութային հանձնաժողովների լիազորների ժողովների ու կոոպե-

Իստիլ հասարակայնութեան այլ բջիջների աշ-
խատանքներին, կինն աստիճանաբար պատրաստ-
վում է փոխարինել կոոպերացիայի հին ապա-
րատը նոր ապարատով, վորը տեխնիքական ու
կուլտուրական մտքով ավելի յե պատրաստված
կոոպերացիայի հակայական աշխատանքն առաջ
տանելու իսկապես կոոպերատիվութեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կոռպերացիան—դեպի սոցիալիզմ տանող ճանապարհն է:	3
Ի՞նչ է տալիս կոռպերացիան բանվորու- հուն և տնտեսուհուն:	20
Բանվորուհի և տնտեսուհի, ակտիվ յեղբր:	29



ՀՍՍՐ ԳԴՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
 ԿԵՆՏՐՈՆԿ
 ԳՐԱԴԱՐԱՆ № 2
 ԱԿՈՒՆԻՍՏՆԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039151

[104]

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

A $\frac{I}{4256}$